

ուր հարցաքննուեցաւ քահանայապետէն, յետոյ հայհոյութեան յանցանքով ամբաստանուելով մահուան դատապարտուեցաւ: Նոյն միջոցին Պետրոս գաւիթը նստած ըլլալով երեք անգամ ուրացաւ իր վարդապետը: Սպասաւորները յետոյ սկսան Յիսուսի հետ անարգանօք վարուիլ՝ մինչև որ առաւօտուն Սենեարիոնի Ատեանին ներկայացաւ (Յովհ. ԺԸ. 12-27, Ղուկ. ԻԲ. 54-62):

333 ին, Պորտոյի անանուն ուխտաւորը այցելեց Վերնատան եկեղեցին «հո՛ն ուր կը տեսնուի Կայիափայլի տունը»: Զ. դարու ուղեգիրները կը պատմեն թէ քահանայապետին տան տեղւոյն վրայ եկեղեցի մը շինուած էր և կը կոչուէր Ս. Պետրոսի անունով, ի յիշատակ անոր զղջումին: Սոփրոնիոսը այս եկեղեցին ցոյց կուտար Սիրոնի եկեղեցւոյն հիւսիսային կողմը, իսկ ԺԲ. և ԺԳ. դարերու ուխտաւորներ կը նշանակեն զայն Ս. Կոյսի ննջման տեղւոյն մօտ:

Կայիափայլի տան աւերակաց մէջ, Պորտոյի անանուն ուխտաւորին ժամանակ կը յարգուէր այն ախընդ որուն վրայ Յիսուս քահանայապետին ծառաներէն կապուեցաւ և ձաղրեցաւ, նոյն ժամանակի պատմիչներուն բացատրութեան համաձայն: Այս սիւնը յետոյ Սիրոնի եկեղեցիին դրան զարդը եղած է հին ուղեգիրներու խօսքին համաձայն: Երբ Պարսից արշաւանքներուն հետեանքով Սիրոնի սրբավայրերը քանդուեցան՝ այս սիւնն ալ երկուքի կտորուեցաւ, որուն կէսը պահուեցաւ Սիրոնի մայր եկեղեցիին մէջ, իսկ միւս կէսը փոխադրուեցաւ Կայիափայլի տան սրբավայրը(\*):

(\*) Ե. դարու հայ ուխտաւոր շի յիւր Զաղանաց սիւնը Կայիափայլի տան եկեղեցիին մէջ, այլ կը յիշէ հոն ուրիշ ֆար մը. «վէմն